ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/135

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Մասնակից՝ «Մոդեռն Շին» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով գնանշման հարցում, շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8168-2020 գրությամբ «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.05.2020թ.-ի թիվ 20/417 գրության հիման վրա, 03.06.2020թ.-ին «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 03.06.2020թ.-ին:

03.06.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/135 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

10.06.2020թ.-ին և 26.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.06.2020թ.-ին:

2. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 27.05.2020թ.-ի թիվ 20/417 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, ներկայացվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մոդեռն Շին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մոդեռն Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.06.2020թ.-ին գրությամբ դիմել է «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8168-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/135 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 30.04.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մոդեռն Շին» ՍՊԸ-ն:

«Մոդեռն Շին» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով, հաղթող մասնակից է ճանաչվել «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

13.05.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 5 օրացուցային օր՝ 14.05.2020թ.-18.05.2020թ. ներառյալ:

Պատվիրատուն 20.05.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է, որպեսզի

վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետներում կնքի պայմանագիրը և ներկայացնի որակավորման ապահովումները:

23.05.2020թ.-ին «Մոդեռն Շին» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում ճանաչվելով հաղթող մասնակից՝ ստացել է պայմանագրի շնորհում, սակայն հրաժարվում է այն կնքելուց, քանի որ Մասնակցի աշխատակիցները գտնվել են կարանտինային պայմաններում:

Հանձնաժողովի 26.05.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մոդեռն Շին» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է վերջինիս հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8168-2020 գրությամբ «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 30.04.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին Հանձնաժողովի 13.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է հաղթող մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուն 20.05.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետներում կնքի պայմանագիրը և ներկայացնի որակավորման ապահովումները:

23.05.2020թ.-ին «Մոդեռն Շին» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում ճանաչվելով հաղթող մասնակից՝ ստացել է պայմանագրի շնորհում, սակայն հրաժարվում է այն կնքելուց, քանի որ Մասնակցի աշխատակիցները գտնվել են կարանտինային պայմաններում:

Հանձնաժողովի 26.05.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մոդեռն Շին» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է վերջինիս հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Մոդեռն Շին» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/6-ԸՆԹԱՑԻԿ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Մասնակցի աշխատողները գտնվել են կարատինային պայմաններում, ուստի այդ

հանգամանքով պայմանավորված վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ շինարարական աշխատանքների կատարման ավարտ է սահմանվել՝ 15.11.2020թ.-ը ներառյալ:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ անհաղթահարելի ուժով պարտավորություններից ազատվելու հնարավորությունը ռեալ է, այսինքն՝ ծագում է արդեն իսկ ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում, իսկ պարտավորություն-ները սույն դեպքում կարող էին առաջանալ պայմանագրի կնքման ուժով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից պայմանագիր կնքելը եղել է հնարավոր և այն չկնքելու մասով Մասնակցի կողմից բերված փաստերը (աշխատակիցների կարանտինային պայմաններում գտնվելու հանգամանքը) չէր կարող պայմանավորված լինել ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի հունիսի 13-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ, քանի որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.11.2020թ.-ը ներառյալ, ինչպես նաև պայմանագրի նախագծի 7.8 կետի համաձայն՝ աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մոդեռն Շին» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից,

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8168-2020 գրությամբ «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/135 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մոդեռն Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ